Սիրելի՛ Միլենա,

Նամակդ ընթերցել ու տարբեր զգացմունքներ եմ ապրել:

Ես այս զգացմունքների միջոցով ուրախացա, որ 16-ամյա երիտասարդը այդքան խաղաղասեր է, մյուս կողմից ափսոսացի, որ գովերգում ես քո ազգին ու ժողովրդին: Այժմ այս նամակի մեջ կբացատրեմ քեզ իմ զգացմունքները:

Միլենա, ես ապրում եմ Բաքվում, ադրբեջանցի եմ: Սակայն եթե իմ ինքնությանը ուզենաս կարգավիճակ տալ, ես բռնի տեղահանված (թարգ. - ներքին տեղահանված) եմ: Ժամանակին ընտանիքս բռնի կերպով վտարվել է իր հողերից: Չեմ ցանկանում խոսալ այդ միջադեպի և ոչ մի պատճառի մասին: Որովհետև ես այդ կարգավիճակից ու քո հայ լինելուց առաջ որպես Աստծո կողմից արարված էակ՝ ցանկանում եմ խոսալ խաղաղությունից ու մարդկային արժեքներից: Նամակների մեջ ինձ հատկապես գրավել է քո նամակը: Որովհետև 16 տարեկանում խաղաղություն երազելն ու և ապագայում առանց որևէ տարբերություն դնելու ցանկացած վիրավորի օգնելու պատրաստակամությունդ ինձ շատ է ուրախացրել: Քեզ խնդրում եմ, եթե խաղաղություն ես ցանկանում, այն ամբողջ սրտով ցանկացիր: Երբ զգաս խաղաղությունը, եղի՛ր ուղղակի Միլենա, ոչ թե հայ ազգի ներկայացուցիչ: Ես էլ եմ դա անում: Երբ մեր պետություններին, ամբողջ աշխարհին խաղաղություն եմ մաղթում, դառնում եմ ուղղակի մի աղջնակ, որ ցանկանում է տեսնել խաղաղություն ու օգնել որպեսզի խաղաղություն լինի: Այդ ժամանակ արդեն փորձում եմ մոռանալ ազգային ինքնությունն ու տեղի ունեցած դեպքերը:

Շատ ուրախալի է, որ նույն կապույտ երկնքի տակ ես ու դու երկու կողմերի համար նույնիսկ ամբողջ մարդկության համար երջանիկ և խաղաղ կյանք ենք մաղթում: Արի՛ երկուսս ուղղակի որպես Մենք, որպես ԵՍ ու Դու, ձգտենք դեպի խաղաղությունը: Ամբողջ մարդկային արժեքները, արդարությունը, մարդասիրությունը, ստեղծված էգոներից, ազգային ինքնությունից վրեժխնդրությունից ու ատելությունից ավելի կարևոր են: Այս նամակը ամբողջ պատասխանատվությամբ եմ գրում և մաղթում, որ երկուսս ընդմիշտ մեր սրտերում պահենք խաղաղություն արժեքը: Կա մեկ բան, որ ցանկանում եմ, որպեսզի չմոռանաս: Դու ինձ համար հայ Միլենան չես: Դու ինձ համար 16 տարեկան խաղաղության ջատագով, բարի նպատակներ ունեցող, գթասիրտ սրտով Միլենան ես, և մաղթում եմ, որ միշտ մնաս այդպիսին:

Հարգանքներով՝

Խաղաղության ձգտող երիտասարդ մի աղջնակ՝ Կունել